Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԵՎ ՄՈՍԿՎԱՅԻ ՈՒ ՀԱՄԱՅՆ ՌՈՒՍԻՈ ՊԱՏՐԻԱՐՔ Ն.Ս. ԱԼԵՔՍԻ Բ-Ի ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՄԲ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱՎ ՎԵՐԱՄԲԱԳՈՐԾՈՒՄԸ ՍԱՆԿՏ ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ Ս. ԿԱՏԱՐԻՆԵ ԵԿԵՂԵՑՈՒ

Մեր ժողովրդի հոգևոր վերարթնության բերկրառիթ սլացքով նոր ու սքանչելի փաճարներ են օծվում ու վերասրբագործվում Մայր Հայրենիքում և սփյուռքում՝ դառնալով պատվարը հավատո ամրության և օրրանները ազգային-եկեղեցական կյանքի:

Այս շրջագծում Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Բ Հայրապետը հուլիսի 11-15-ը այցելեց Ռուսաստանի Դաշնություն՝ Սանկտ Պետերբուրգ՝ նախագահելու Ս. Կատարինե եկեղեցու վերասրբագործման արարողությունը և պսակելու տեղի եկեղեցասեր հայերի իղձերը՝ իր առաքելության մեջ լիարժեք տեսնելու Ս. Կատարինե եկեղեցին: Նորին Սրբությունը նախապես հրավեր էր ուղղել նաև Համայն Ռուսիո Պատրիարք Ալեքսի Բ-ին, ով սիրահոժար ընդունել էր հրավերը՝ համահայկական շքեղ այդ հանդիսությանը հաղորդելով նաև համառուսական հնչեղություն:

ՄԵԿՆՈՒՄ

Հուլիսի 11-ին, ժամը 9.40-ին, Վեհափառ Հայրապետը Երևանի «Զվարթնոց» օդանավակայանից մեկնեց Սանկտ Պետերբուրգ՝ ուղեկցությամբ Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ, Գերշ. Տ. Նավասարդ եպիսկոպոս Կճոյանի, գավազանակիր Տ. Արշակ աբեղա Խաչատրյանի, Արժանապատիվ Տ. Վաչե քահանա Հայրապետյանի, ԳԱԱ փոխնախագահ, ակադեմիկոս Սերգեյ

Համբարձումյանի, ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Աղվան Հովսեփյանի, Երևանի Բժշկական համալսարանի ռեկտոր Վիլեն Հակոբյանի, Շվեդիայում Հայաստանի դեսպան Վլադիմիր Կարմիրշալյանի, ՀՌԱԿ-ի վարչության ատենապետ Ռուբեն Միրզախանյանի:

Օդանավը 9.40-ին վայրէջք կատարեց Սանկտ Պետերբուրգի «Պուլկովո» օդանավակայանում, որտեղ Նորին Սրբությանը դիմավորեցին նառանգի իշխանության բարձրաստիճան պաշտոնյաները՝ գլխավորությամբ նառանգապետ Վլադիմիր Ցակովլևի: Ռուսաց Եկեղեցու տեղի հոգևոր դասը գլխավորում էր Սանկտ Պետերբուրգի միտրոպոլիտ Վլադիմիրը, Հայոց համայնքի եկեղեցական վարչության անդամները՝ հոգևոր հովիվ Տ. Եզրաս աբեղա Ներսիսյանի գլխավորությամբ, և ուրիշներ: Օդանավակայանում ողջույնի խոսքեր փոխանակելուց հետո Նորին Սրբությունը ուղեկցող շքախմբի հետ ուղևորվեց հյուրանոց:

Ժամը 14.00-ին Վեհափառ Հայրապետին ընդունեց Ռուսաստանի Դաշնության նախագահի Հյուսիս-Արևմտյան շրջանի լիազոր ներկայացուցիչ Վիկտոր Չերկասովը: Հանդիպման ընթացքում քննարկվեցին փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող խնդիրներ՝ հայ և ռուս ժողովուրդների առավել սերտ համագործակցության ապահովման նպատակով ձեռնարկվելիք միջոցառումների վերաբերյալ:

Երեկոյան Ս. Կատարինե եկեղեցում տեղի ունեցավ վերասրբագործման արարողության ծիսական պատրաստություն և երեկոյան ժամերգություն՝ ընդ նախագահությամբ Գերշ. Տ. Վաչե արքեպս. Հովսեփյանի: Սրբազան Հայրը, նախքան Վեհափառ Հայրապետի ժամանումը, արդեն իսկ Սանկտ Պետերբուրգ էր եկել Միացյալ Նահանգներից: Հաջորդ օրը Նորին Սրբության շքախումբը ավելի հոծացավ: Սանկտ Պետերբուրգ ժամանեցին Միացյալ Նահանգաց հայոց արևելյան թեմի առաջնորդ, Գերշ. Տ. Խաժակ արքեպս. Պարսամյանը, Հարավային Ռուսաստանի առաջնորդական տեղապահ, Հոգշ. Տ. Մովսես վարդապետ Մովսիսյանը՝ թեմի երկու հոգևորականների հետ, Բաթումի հայոց հոգևոր հովիվ, Հոգշ. Տ. Աբգար աբեղա Հովակիմյանը՝ համայնքային վարչության անդամների հետ, և ուրիշներ:

ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆ ԷՐՄԻՏԱԺ

Հուլիսի 12-ին, ժամը 10.00-ին, Վեհափառ Հայրապետի գլխավորությամբ հոգևոր այրերն ու աշխարհական փիարք այցելեցին Էրմիտաժ, ուր Նորին Սրբությանը ընդառաջ ելավ թանգարանի ողջ աշխատակազմը՝ ի գլուխ տնօրեն Միխայիլ Պիոտրովսկու: Ողջույնի ու բարեմաղթանաց ավանդական արարողությունից հետո հաճելի անակնկալով հայտարարվեց, որ, ըստ հոգևոր հովիվ Տ. Եզրաս աբեղա Ներսիսյանի և թանգարանի տնօրենության միջև ձեռք բերված համաձայնության, Հայ Եկեղեցուն է փոխանցվելու թանգարանում ցուցադրվող Սկևռայի մասնատուփը: 13-րդ դարում Սկևռայի վանքում պատրաստված մեծարժեք այս սրբության մեջ պահվում են մասունքները 12 առաքյալների և Ս. Գրիգոր Լուսավորչի:

Ի գնահատություն թանգարանի տնօրեն Միխայիլ Պիոտրովսկու՝ հայ համայնքի նկատմամբ դրսևորած ջերմ վերաբերմունքի, Վեհափառ Հայրապետը մեծանուն հայագետին պարգևաբաշխեց «Ս. Սահակ - Ս. Մեսրոպ» պատվո շքանշանը:

Այնուհետև թանգարանի տնօրենին ուղղված շնորհավորանքի և շնորհակալության խոսքում ի մասնավորի սուրց.

«Այս պահին, երբ մենք կանգնած ենք հռչակավոր Էրմիտաժի այս փառաշուք սրահում ներկայացված «Էջմիածնի գանձերը» ցուցահանդեսի մասունքների և մասնավորապես այս պահին մեզ փոխանցված Սկևռայի մասնատուփում դրսեր ի վեր պահպանված մասունքների առջև, Մեր և Մեր հավատացյալ զավակների ոգիները բերկրանքի ու ցնծության մեջ են թևածում: Այդ ուրախությանը արձագանքում է նաև Սանկտ Պետերբուրգի երկինքն իր պայծառ արևով: Արևի պայծառ շողերի հետ երկնքից օրհնություն է իջնում ...

... մասունքները, որ գտնվում էին Էրմիտաժի սրահներում, իբրև ցուցադրության նմուշներ, վերադարձվում են Եկեղեցուն, որպեսզի հավատացյալ ժողովրդին սփռեն իրենց օրհնությունը:

Ինչպես ասվում է, «Կաղերը պիտի քայլեն այս մասունքների հրաշագործությամբ, համրերը պիտի խոսեն, խուլերը պիտի լսեն, հիվանդները պիտի ապաքինվեն»: 2000 դարակազմիկ թվականի սեմին և նախամուտքին Հայաստանում քրիստոնեության պետական նրոն հռչակման 1700-ամյակի այսօրվա արարողությունը մեզ համար այլ իմաստ և խորհուրդ է պարունակում: Մենք ունենում ենք այն վստահությունը, որ նոր հազարամյան աշխարհի ողջ ժողովուրդների համար պիտի լինի խաղաղության, օրհնության, եղբայրական սիրո մի շրջան: Հետևաբար մեր հոգին լցվում է նորովի հույսով ու հավատով»:

Ապա, «Սիոնի որդիք» մեղեդու երգեցողության ներքո մասնատուփը դուրս բերվեց թանգարանից և տարվեց Ս. Կատարինե եկեղեցի:

Ս. ԿԱՏԱՐԻՆԵ ԵԿԵՂԵՑՈՒ ՎԵՐԱՄՐԲԱԳՈՐԾՈՒՄԸ ԵՎ Ս. ՊԱՏԱՐԱԳ

Ժամը 11.45 էր...

Պատարագչի Հայրապետական զգեստավորումով Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը տաճարի առջև դիմավորեց Նորին Սրբություն Ալեքսի Բ-ին: 11.00-ին զանգերի տոնական ղողանջով ազդարարվեց արարողության սկիզբը: Հանդիսապետն էր Վեհափառ Հայրապետը՝ առընթերակա ունենալով Գերշ. Տ. Խաժակ արքեպս. Պարսամյանին և Գերշ. Տ. Վաչե արքեպս. Հովսեփյանին: Տաճարը լեցուն էր հավատացյալների բազմությամբ: Ապյանում տեղ էին գտավել Նորին Սրբություն Ալեքսի Բ Պատրիարքը, նահանգապետ Վլադիմիր Ցակովլևը, ՌԴ-ում ՀՀ արտա-

կարգ և լիազոր դեսպան Սուրեն Սահակյանը, Պետերբուրգում ՀՀ հյուպատոս Ռուբեն Հակոբյանը և ՀՀ պաշտոնատար այլ անձինք, մշակութային, հասարակական շրջանակների ներկայացուցիչներ:

Հընթացս սրբազան արարողության, Նորին Սրբություն Ռուսիո Պատրիարքը Ս. Խորան բարձրացավ: Եղբայրական աղոթակցությամբ երկու Հովվապետերը կապտարեցին խաչքարի օծումը, որը զետեղված էր Խորանի հյուսիսային պատի մեջ: Հավարտ արարողության, շնորհավորանքի իր ջերմ խոսքը հղեց Վեհափառ Հայրապետին և հավատացյալ ներկաներին Ալեքսի Պատրիարքը՝ անկեղծորեն խոստովանելով. *«Մենք լցված ենք ուրախությամբ Մեր հայ եղբայրների հոգևոր խնդության այս առիթով, քանզի տաճարի օծման արարողությունը վերազգային, համաքրիստոնեական իրադարձություն է՝ կոչված հավատքի նորոգություն բերելու մեր եղբայր հայ ժողովրդի հավատացյալ հոտին»*:

Խոսքի ավարտին Ռուս Պատրիարքը Ս. Կատարինե եկեղեցուն նվիրեց Տերունական սրբապատկեր:

Ապա ներկա հավատացյալներին հոգևոր ուրախության Իր պատգամը փոխանցեց Վեհափառ Հայրապետը:

««Ի վերայ վիմի հաւատոյ շինեցեր զքո սուրբ զեկեղեցի. զսա պահեա ի խաղաղութեան...»:

Միրելի բարեպաշտ ժողովուրդ.

Հավատքի և քրիստոնեական եղբայրական սիրո հաղթության խորհրդով է բացվել առավոտը Սանկտ Պետերբուրգի երկնքում՝ լի երկնառաք օրհնությամբ, խնդությամբ ու բերկրանքով: Օրհնյալ է Աստված, որ արժանացնում է Մեզ շնորհին՝ որպես Ամենայն Հայոց Կաթողիկոս, ռուսաց փառքի պանծալի քաղաքում կատարելու Ս. Կատարինե հայկական եկեղեցու օծումն ու վերաբացումը: Մեր հոգին պարուրող մխիթարությունն ու երջանկությունը բազմապատիկ է այսօր, քանզի ի Քրիստոս Մեր սիրեցյալ եղբայր, Ռուս Ուղղափառ Եկեղեցու հովվապետ Ալեքսի Երկրորդ Սրբազան Պատրիարքը աղոթակից է Մեզ հնամյա և նորաշուք այս կամարների ներքո և մասնակից՝ հանդիսության ուրախությանը: Եղբայրական անկեղծ սիրով ենք ողջունում և հանուն մեր հավատացյալ ժողովրդի խորազգաց գոհունակությունը հայտնում Նորին Սրբություն Ալեքսի Բ Համայն Ռուսիո Սրբազան Պատրիարքին: Գոհություն և փառք Բարձրյալին, որ սրբալույս մի տաճար ևս Հայ և Ռուս ավանդական Եկեղեցիների երկու Հայրապետների օրհնությամբ, քրիստոսասեր Մեր զավակների փառաբանական աղոթքով արքայության իր դռներն է բացում հավատացյալների առջև՝ դեպի երկինք բարձրացնելու նրանց հայցը՝ առ Աստված:

Միրելիներ. Լուսո խորան Տաճարի վերաբացման խնդությամբ լի այս օրը նշանավորվում է նաև հայ և ռուս ժողովուրդների՝ ժամանակ ու փորձություններ հաղթահարած բարեկամության մի նոր խորհրդանիշի՝ քանդակազարդ խաչքարի զետեղումով Սուրբ Կատարինե շքեղազարդ եկեղեցում, որի կենարար զորությամբ օրհնու-

թյուն է բերվելու սրբազան Ռուսիո հյուրընկալ հողին և նրա շինությանն ու բարգավաճմանը լծված հայ և ռուս քրիստոնյաներ ժողովուրդների հավատավոր զավակներին:

Բերկրաշատ այս առիթով Մեր ջերմ ողջույններն ու գնահատանքն ենք բերում և հանուն տեղի հայոց համայնքի մեր խորին շնորհակալությունն ենք հայտնում Սանկտ Պետերբուրգի մարզի նահանգապետ, մեծարգո պրն Յակովլևին, Սանկտ Պետերբուրգի քաղաքային պատկան իշխանություններին՝ հայոց ավելի քան 200-ամյա եկեղեցին վանքապատկան կալվածների որոշ մասով վերստին հայկական համայնքին փոխանցելու և նրա նորոգությանն ըստ ամենայնի օժանդակելու համար:

Հայրապետիս սիրտը առլեցուն է մխիթարության ուրախությամբ, քանզի Սանկտ Պետերբուրգյան խնդությունն այսօր իր արձագանքն է գտել ԱՄՆ-ից, Վրաստանից, Սիրիայից, Լատվիայից, Մոսկվայից և Ռուսաստանի այլ քաղաքներից ժամանած հայորդյաց հոգիներում:

Հայրապետական սիրով ու գորովով, մասնավոր գնահատանքով Մեր օրհնությունն ենք հղում Սանկտ Պետերբուրգի հայ համայնքի հոգևոր հովիվ, Հոգեշնորհ Տ. Եզրաս աբեղա Ներսիսյանին, Եկեղեցական Խորհրդի պատվարժան անդամներին և համայնքի ողջ հայությանը, որ համախումբ Առաքելական մեր Մուրբ Եկեղեցու շուրջ, Գերաշնորհ Տ. Տիրան արքեպիսկոպոս Կյուրեղյանի առաջնորդությամբ, նվիրյալ ու քաջեռանդ իրենց հովվի հետ միասնական ջանքերով պայծառ են պահում հավատքի լույսը, հայաբույր ոգով ու սիրո աշխույժով լցնում հայ կյանքը Հայրենիքից հեռու՝ Նևայի ափերին:

Հավատքի անսասան վեմ առաքելահաստատ Հայոց Եկեղեցին հայ հոգու ծնընդավայրն ու պատվարն է, փրկության տապանը, որ Ավետարանի լույսով և հայրենի ավանդներով սնում, նորոգում ու զորացնում է ազգային մեր կյանքը, կերտում միության մեր Տաճարը:

Մուրբ Կատարինե եկեղեցու վերաբացման հիշարժան այս օրը և ընդհանրապես Սանկտ Պետերբուրգի հայ համայնքի հոգևոր ու ազգային կյանքի վերարթնությունը Մեր միտքը ակամայից տանում են դեպի հայ-ռուս հարաբերությունների բուռն զարգացման վաղեմի այն ժամանակները, երբ հայությունը Ռուսաստանի օգնությամբ Հայաստանի ազատագրության հույսեր էր փայփայում, երբ Ռուսաց օրհնյալ հողում, առաջնորդությամբ Հովսեփ արքեպիսկոպոս Արղությանի, ձևավորվեց Հայ Եկեղեցու թեմերից մեկը և բարեհաճությամբ Եկատերինա Երկրորդ մեծ կայսրուհու՝ Ռուսաստանի հայկական գաղթօջախներում՝ մայրաքաղաք Սանկտ Պետերբուրգում, Մոսկվայում, Նոր Նախիջևանում կառուցվեցին հայկական եկեղեցիներ: Ահա այդ ոգեշունչ և հուսառատ օրերին մայրաքաղաքի հայության, մասնավորաբար հայ մեծահարուստ, հասարակական-պետական գործիչ Հովհաննես Լազարյանի նվիրատվություններով կառուցվեց նաև Մուրբ Կատարինե եկեղեցին:

Այս և պատմական նախորդ ու հետագա ժամանակներում լայնարձակ և հյուրընկալ Ռուսաց երկրում հանգրվանած հայորդիք ամբողջանվեր ու հավատարմությամբ ծառայել են իրենց նոր Հայրենիքին, որպես ազնիվ քաղաքացիներ մասնակցություն բերել Ռուսիո հասարակական կյանքին, փառք բերել նրա մեծապանծ զենքին, համբավ՝ գիտությանը, հարստացրել տնտեսությունն ու համամարդկային հնչողությամբ քրիստոնեաշունչ մշակույթը:

Այսօր Սանկտ Պետերբուրգի հայ համայնքը շարունակում ու արգասավորում է հայ և ռուս ժողովուրդների՝ քրիստոնեական եղբայրության հիմքի վրա կառուցված ավանդական հարաբերությունները, որոնք առավել ամրապինդ են մեր երկու պետությունների և մեր Եկեղեցիների բարեկամությամբ ու համագործակցությամբ: Փոխադարձ համակրանքի ու վստահության նոր հիմքով Սանկտ Պետերբուրգում այսօր գործում է հայկական ներկայացուցչությունը: Մենք ակնանատես ենք, թե ինչպես վերջին մի քանի տարիների ընթացքում Վասիլևյան կղզում վերանորոգվեց Սուրբ Հարություն հայոց եկեղեցին, համայնքում կյանքի կոչվեցին կիրակնօրյա դպրոցը, «Հավատամք» պարբերականը, բժշկական բարեգործական կենտրոնը. Եկեղեցասիրաց երիտասարդական միությունը, գործարկվեց հացի և հրուշակեղենի փուռը: Անավասիկ, այսօր Նևսկի հանրահայտ պողոտայում նոր շունչ է առել Սուրբ Կատարինե եկեղեցին: Այս ամենը խոսուն վկայությունն է հայ և ռուս ժողովուրդների եղբայրության, նաև արգասիքը բարեհույս այն բարեփոխումների, որ ապրում է Ռուսաստանի ինքնիշխան Դաշնությունը: Արդարև, իրենց նորօրյա կյանքը երկնատուր Հույսով, Միրով ու Հավատքով իմաստավորող մեր ժողովուրդները պիտի ընթանան դեպի խաղաղության ու բարօրության հանգրվան: Հավատում ենք, որ քրիստոնեական արժեքների կենսավորումով պիտի բացվի ու նշանավորվի երրորդ հազարամյակը մարդկության կյանքի:

Սուրբ Կատարինե եկեղեցու վերաբացման երջանիկ այս առիթով համայն հայության Սրբություն Սրբոց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի օրհնությունն ենք բերում Ձեզ բոլորիդ և Մեր լավագույն բարեմաղթանքները:

Թող նորաբաց հայոց եկեղեցին Աստծո օրհնությունն ու լույսը սփռի Ռուսաց հողում և Սանկտ Պետերբուրգի հայ համայնքում: Թող Աստծո Սերը միշտ շաղկապող լինի մեզ միմյանց, զորացնի մեզ և առաջնորդի՝ ի պայծառություն Իր Սուրբ Եկեղեցու, ի բարօրություն անկախ մեր պետությունների ու իրենց նոր կյանքը կերտող մեր ժողովուրդների:

Սրբագործման լուսառատ այս օրը Սուրբ Կատարինե եկեղեցուն ենք ընծայում մյուռոնաթափ այս աղավնին՝ աղոթքով առ Աստված, որ Սրբալույս Մյուռոնը առատ օրհնություն բերի Սանկտ Պետերբուրգի հայ համայնքին:

Սուրբ Կատարինե եկեղեցու վերասրբագործման առիթով ուրախ ենք ի Քրիստոս Մեր սիրելի եղբորը՝ Ալեքսի Բ Պատրիարքին նվիրել արծաթյա այս խաչը՝ որպես մեր երկու ժողովուրդների և Եկեղեցիների եղբայրության վկայություն:

ԵՐԿՈՒ ՀՈՎՎԱՊԵՏԵՐԸ Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ՆԱՀԱՆԳԱՊԵՏԻ ՀԵՏ



ՀԱՄԱՅՆՔԻ ՀՈԳՍԵՐՈՎ ՄՏԱՀՈԳ...

«Շնորհք, սէր եւ խաղաղութիւն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եղիցին ընդ մեզ եւ ամենեսեան. ամէն»»:

Խոսքի ավարտին Նորին Սրբությունը Ալեքսի Պատրիարքին ընծայեց արծաթյա զարդանախշ բաժան, իսկ Ս. Կատարինե եկեղեցուն՝ արծաթյա սկիհ:

Հավատք Ս. Պատարագի կառավարական հյուրատանը՝ «Կա Դվա»-ում, տրվեց հանդիսավոր ճաշկերույթ, որի ընթացքում հնչեցին շնորհավորանքներ, բարեմաղթանաց բազմաթիվ խանդավառ ելույթներ և կատարվեց նվերների փոխանակում: Ալեքսի Պատրիարքը Վեհափառ Հայրապետին նվիրեց Ռուս Պատրիարքների պատկերներով մեդալիոնների գեղեցիկ մի հավաքածու, իսկ Հայոց Հայրապետը՝ Ռուս Պատրիարքին ընծայեց հայ վարպետի ձեռքով պատրաստված գեղեցիկ խաչքարացույց՝ ներսում քանդակված նրբին զարդանկարով:

ՀԻՆԳՇԱԲԹԻ, ՀՈՒԼԻՍ 13

Առավոտյան ժամը 11.00-ին Նորին Սրբությունը Իր շքախմբի և մարզային բարձրաստիճան պաշտոնյաների ուղեկցությամբ այցելեց Պիսկարևյան գերեզմանատուն՝ հարգանքի տուրք մատուցելու Հայրենական Մեծ պատերազմում զոհված զինվորների հիշատակին: Հուշանոթողին Ամենայն Հայոց Կաթողիկոսի կողմից ծաղկեպսակ գետնդրվեց:

Այնուհետև Վեհափառ Հայրապետը հյուրընկալվեց Վլադիմիր Յակովլևի կողմից՝ նահանգապետարանում: Մուտքի սրահում Վեհափառ Հայրապետին դիմավորեց նահանգապետը՝ ողջ աշխատակազմով: Ընդարձակ սրահում Հայոց Հայրապետը ողջույնի և բարեմաղթանաց խոսք փոխանակեց նահանգապետի հետ: Ապա, ի դիմաց նահանգապետի՝ Պետերբուրգի հայության նկատմամբ դրսևորած ջերմ վերաբերմունքի և ընդառաջող ոգու, Նորին Սրբությունը Վլադիմիր Յակովլևին պարգևաբաշխեց «Ս. Ներսես Շնորհալի» շքանշանը: Հանդիպումը կրում էր հայ և ռուս ժողովուրդների հարաբերությանց ջերմ կնիքը, իսկ երկուստեք անթաքույց ուրախությունը հավաստումն էր այն իրողության, որ Ս. Կատարինե եկեղեցու օծումը նշանակալից իրադարձություն էր ողջ քաղաքի համար:

Օրվա կարևոր երկրորդ հանգրվանը հանդիպումն էր հայ համայնքի հետ: Համայնքի հոգևոր հովիվ Տ. Եզրաս աբեղա Ներսիսյանի հրավերով հանդիպման էր եկել Սանկտ Պետերբուրգի հայոց համայնքի սեղուցքը, որը հնարավոր ամեն ինչով սեփական նպաստն էր բերել հայության հանդիսությանն և Ս. Հարություն ու Ս. Կատարինե եկեղեցիների բարեզարդմանը: Հանդիպման ընթացքում, ընդառաջելով հոգևոր հովվի խնդրանքին, համայնքի շուրջ վեց տասնյակ անդամների շնորհվեց Հայրապետական Օրհնության գիր՝ ի գնահատություն եկեղեցաշեն նվիրյալ գործունեության:

ՈՒՐԲԱԹ, ՀՈՒԼԻՍ 14

Վերջին օրն էր Սանկտ Պետերբուրգյան տոնախմբությանց: Հյուրերից շատերն արդեն մեկնել էին:

Վեհափառ Հայրապետը առավոտյան այցելեց Ս. Հարություն եկեղեցի՝ ուխտի աղոթք շրթներին, ապա մուտք գործեց Հովվատուն, որտեղ տեղի ունեցավ Սանկտ Պետերբուրգի հայ նկարիչների ցուցահանդեսի բացումը;

Երեկոյան Վեհափառ Հայրապետը Էրմիտաժում էր ...

Հայ և ռուս արվեստասեր պատկառելի հասարակայնությունը Նորին Սրբության հետ ներկա էր համերգ-երեկույթին, որի ընթացքում հայ շնորհալի դիրիժոր Տիգրան Մարգսյանի ձեռքերի սահուն շարժումներին ներդաշնակ՝ Էրմիտաժի լարային նվագախումբը ներկաներին մատուցում էր դասական երաժշտության ընտիր նմուշներ:

Համերգի ավարտին Էրմիտաժի ընդունելությանց սրահում Վեհափառ Հայրապետին աջահամբույրի եկան հայ համայնքի անդամները:

Նորին Սրբության կողքին էր Էրմիտաժի տնօրեն Միխայիլ Պիոտրովսկին՝ ազգությամբ հայ մոր հետ, որի աչքերին ուրախության արցունքներ կային:

ՄԵԿՆՈՒՄ

Հաջորդ օրը, շաբաթ, 13 հուլիսի, Վեհափառ Հայրապետը «Պուլկովո 1» օդանավակայանից վերադարձավ Հայաստան, Մայր Աթոռ Ս. Էջմիածին:

Ինչպես միշտ, Տաճարի առջև Նորին Սրբությանը դիմավորեցին Մայրավանքի միաբանները, և թափորը հանդիսաքայլ, զանգակների ուրախ զողանջների ներքո մուտք գործեց Տաճար: Լուսարարապետ, Գերշ. Տ. Հուսիկ արքեպս. Սանթուրյանի բարիգալստյան խոսքից հետո Վեհափառ Հայրապետը հոգևոր և հավատացելոց դասին հղեց Իր պատգամը՝ կիսելով Պետերբուրգյան օրերի տպավորությունները և ներկաներին խանդավառելով նույն ուրախությամբ: